# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

«24» հոկտեմբերի 2023թ. N: 416 -Ա ք.Գյումրի

## ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 20-ի N: 72-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «դ», «է» կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 24-ի N 824-Ն որոշմամբ հաստատված «Տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսաապահովման կարգի» 2-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ կետերի դրույթները և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետի 2023 թվականի օգոստոսի 8-ի N 1074-93/16 գրությունը՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարահանված բնակչության կենսաապահովման գործընթացի նախապատրաստման միջոցառումների պլանը՝ համաձայն N 1 հավելվածի,

2)Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի 10 կիլոմետրանոց սահմանամերձ գոտուց ըստ տարիքային խմբերի տարահանվող բնակչության հաշվարկը՝ համաձայն N 2 հավելվածի,

3)Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի 10 կիլոմետրանոց սահմանամերձ գոտուց տարահանվող բնակչության սննդամթերքով ապահովման հաշվարկը՝ համաձայն N 3 հավելվածի,

4)Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի 10 կիլոմետրանոց սահմանամերձ գոտուց մինչև մեկ տարեկան տարահանվող երեխաների սննդամթերքով ապահովման հաշվարկը՝ համաձայն N 4 հավելվածի,

5)Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի 10 կիլոմետրանոց սահմանամերձ գոտուց տարահանվող բնակչությանն անհրաժեշտ հագուստի և առաջին անհրաժեշտության ապրանքների ապահովման հաշվարկը՝ համաձայն N 5 հավելվածի,

6) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի 10 կիլոմետրանոց սահմանամերձ գոտուց տարահանվող բնակչությանն անհրաժեշտ կոմունալ-կենցաղային սպասարկման ապահովման հաշվարկը՝ համաձայն N 6 հավելվածի,

7) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի 10 կիլոմետրանոց սահմանամերձ գոտուց տարահանվող բնակչությանն անհրաժեշտ ջրով ապահովման հաշվարկը՝ համաձայն N 7 հավելվածի,

8) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի 10 կիլոմետրանոց սահմանամերձ գոտուց տարահանվող բնակչությանն անհրաժեշտ բժշկական ապահովման հաշվարկը՝ համաձայն N 8 հավելվածի,

9) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի 10 կիլոմետրանոց սահմանամերձ գոտուց տարահանվող չափահաս բնակչությանն անհրաժեշտ հագուստի, ներքնազգեստի և կոշիկի ապահովման հաշվարկը՝ համաձայն N 9 հավելվածի,

10) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի 10 կիլոմետրանոց սահմանամերձ գոտուց տարահանվող երեխաներին անհրաժեշտ հագուստի և կոշիկի ապահովման հաշվարկը՝ համաձայն N 10 հավելվածի,

11) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի 10 կիլոմետրանոց սահմանամերձ գոտուց տարահանված բնակչության կենսաապահովման միջոցառումների կապի, ազդարարման և կառավարման սխեման՝ համաձայն N 11 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2013 թվականի մարտի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարահանված բնակչության կենսաապահովման գործընթացի նախապատրաստման միջոցառումների պլանը հաստատելու մասին» N: 72-Ա որոշումը:

Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2023 թվականի 24 հոկտեմբերի N: 416-Ն որոշման

ՊԼԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Պլանի սահմանումը և պլանի նպատակը

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարահանված բնակչության կենսաապահովման գործընթացի նախապատրաստման միջոցառումների պլանը (այսուհետ՝ Պլան) սահմանում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակների դեպքում վտանգավոր և քաղաքացիական պաշտպանության խմբին դասվող տարածքներից տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսաապահովման գործընթացի միջոցառումների իրականացման ժամանակ պետական տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործողություններն ու դրանց իրականացման կարգը:

Պլանում ներգրավվող մարմինները

2. Պլանում ներգրավվում են հետևյալ մարմինները՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային տարահանման հանձնաժողովը,

2) Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) Ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՆԳՆ) փրկարար ծառայության (այսուհետ՝ ՓԾ) Շիրակի մարզային փրկարարական վարչությունը (այսուհետ՝ ՇՄՓՎ),

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչությունը,

4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչությունը,

5) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչությունը,

6) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությունը,

7) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը,

8) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության (այսուհետ՝ ՊՆ) Շիրակի զինվորական կայազորը,

9) Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Շիրակի մարզային վարչությունը,

10) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում գործող կապի օպերատորների տարածքային կենտրոնները,

11) «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության «Հյուսիս» շահագործման տնօրինության «Շիրակ» տեղամասը,

12) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Ղարս» մասնաճյուղը,

13) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Շիրակի գազաֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղը,

14) Գյումրու «Շիրակ» օդանավակայանը,

15) Գիտությունների ազգային ակադեմիայի Ա.Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպությունը,

16) ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Շիրակ» մասնաճյուղը,

17) ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Շիրակի մարզային կենտրոնը,

18) Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Շիրակի մարզի Գյումրու ջրաբանական կայանը և Գյումրու, Ամասիայի, Աշոցքի, Արթիկի օդերևութաբանական կայանները,

19) Շիրակի մարզային հեռուստառադիոընկերությունները,

20) ‹‹Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն›› պետական ոչ առևտրային կազմակերպության հյուսիսային տարածաշրջանային կենտրոնը,

21) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի համայնքապետարանները:

Պլանում ներգրավված մարմինների գործառույթները

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարահանված բնակչության կենսաապահովման գործընթացի նախապատրաստման միջոցառումների պլանում ներգրավված մարմինների գործառույթներն են՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի գործառույթներն են՝

ա. մարզային պլաններով և ծրագրերով նախատեսված տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսաապահովման գործընթացի իրականացումը,

բ. տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և բնակչության ներգրավումը բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման գործում,

գ. մարզի բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանումը,

դ. կառավարման, կապի և ազդարարման համակարգերի նախապատրաստման ու գործունեության աշխատանքների կազմակերպումը,

ե. ՀՀ ՆԳՆ ՓԾ ՇՄՓՎ և ՀՀ ՊՆ Շիրակի զինվորական կայազորի հետ համատեղ մայրուղիների և ճանապարհների օգտագործման կարգի ճշտումը,

զ. տարահանման և ընդունման հանձնաժողովների գործունեության նախապատրաստումը,

է. տարահանված բնակչության կենսաապահովման միջոցառումների համար նախատեսված տրանսպորտային միջոցների նախապատրաստումը,

ը. բնակչության պաշտպանության կազմակերպման նպատակով մարզի ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի հիմնարկների նախապատրաստումը,

թ. բնակչության զանգվածային պատվաստման նախապատրաստումը՝ պետական հիգիենիկ հակահամաճարակաբանական մարմինների ցուցումներին համապատասխան,

ժ. հատուկ կարևորագույն նշանակություն ունեցող օբյեկտների պահպանության ուժեղացման նախապատրաստումը,

ժա. կազմակերպություններում հակահրդեհային միջոցառումների նախապատրաստումը,

ժբ. գյուղատնտեսական կենդանիների և բույսերի պաշտպանության միջոցառումների ժամանակացույցների ճշգրտումը,

ժգ. արտակարգ իրավիճակների պայմաններում մարզի բնակչության վարվելակերպի, բնակչության կողմից անհատական պաշտպանության պարզագույն միջոցների պատրաստման ուսուցման կազմակերպումը,

ժդ. տուժած բնակչության՝ ժամանակավոր կացարաններով ապահովումը,

ժե. բնակչության պաշտպանության բնագավառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

2) Շիրակի մարզային տարահանման հանձնաժողովի գործառույթներն են՝

ա. տուժած բնակչության՝ ժամանակավոր կացարաններով ապահովման կազմակերպումը,

բ. տարահանված բնակչության ընդունման հավաքակետերի և տեղաբաշխման վայրերի ծավալման նախապատրաստման աշխատանքների նկատմամբ հսկողության իրականացումը,

գ. տարահանված բնակչության ընդունման և տեղաբաշխման միջոցառումների կազմակերպումը և իրականացումը.

դ. տարահանված բնակչությանը տեղաբաշխելու համար նախատեսված տրանսպորտային միջոցների հատկացման աշխատանքների կազմակերպումը,

ե. բնակչության պաշտպանության բնագավառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

3) ՀՀ ՆԳՆ ՓԾ ՇՄՓՎ գործառույթներն են՝

ա. Շիրակի մարզպետին՝ Պլանն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելու վերաբերյալ առաջարկություն ներկայացնելը,

բ. Պլանով նախատեսված միջոցառումների իրականացման կազմակերպումը,

գ. փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը, համակարգումը և իրականացումը,

դ. իր ենթակայության ստորաբաժանումների կայուն գործունեության կազմակերպումը,

ե. բնակչության և կառավարման մարմինների ազդարարումը և իրազեկումը,

զ. կառավարման, կապի և ազդարարման համակարգերի նախապատրաստման և գործունեության աշխատանքների կազմակերպումը,

է. արտակարգ իրավիճակից տուժած տարածքի հետախուզության կազմակերպումը և համակարգումը,

ը. Պլանում ներգրավված մարմինների հետ համագործակցության ապահովումը՝ բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպման և իրականացման համար,

թ. բնակչության պաշտպանության հարցերով պետական տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեության համակարգումը,

ժ. արտակարգ իրավիճակի հետևանքով տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով ֆինանսական, պարենային, բժշկական և այլ նյութական պաշարների, ֆոնդերի նախապես ստեղծման համար առաջարկությունների մշակումը և դրանք ՆԳՆ ՓԾ ներկայացնելը, ինչպես նաև դրանց կուտակման և հետագա նպատակային օգտագործման հարցերի կարգավորումը,

ժա. պետական պահուստից բնակչության կենսաապահովման, տնտեսության կարևորագույն ոլորտների անխափան աշխատանքներն ապահովող նյութական արժեքների ապաամրագրումը և բացթողումը,

ժբ. եղանակի շուրջօրյա կանխատեսման կազմակերպումը,

ժգ. օդի որակի, աղտոտվածության նկատմամբ շուրջօրյա դիտարկման աշխատանքների ապահովման կազմակերպումը,

ժդ. հակահրդեհային անվտանգության ապահովումը,

ժե. բնակչության պաշտպանության բնագավառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

4) Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գործառույթներն են՝

ա. համակարգի աշխատողների պաշտպանության կազմակերպումը,

բ. համակարգման ոլորտում գործող կազմակերպությունների կայուն գործունեության կազմակերպումը,

գ. տուժած բնակչությանը և հիվանդներին ժամանակին անհրաժեշտ բժշկական օգնության ցուցաբերումը, նրանց տարահանումը բժշկական հաստատություններ և հետագա բուժման կազմակերպումը,

դ. ընդհանուր և մասնագիտացված բժշկական հաստատությունների ցանցի պատրաստության բերումն ու համալրումն անհրաժեշտ բժշկասանիտարական գույքով և դեղորայքով,

ե.արտակարգ իրավիճակից տուժած տարածքներում սանիտարահամաճարակաբանական միջոցառումների իրականացումը,

զ. բնակչության զանգվածային պատվաստման համար նախապատրաստական աշխատանքների իրականացումը,

է. ջրի հակահամաճարակային դիտարկման և լաբորատոր հսկողության կազմակերպումը, ինչպես նաև աջակցություն շրջակա միջավայրի և սննդի նկատմամբ իրականացվող դիտարկմանն ու լաբորատոր հսկողությանը,

ը. կազմավորումների և բուժհիմնարկների՝ անհրաժեշտ բժշկական գույքով և դեղորայքով ապահովումը,

թ. արտակարգ իրավիճակներում աշխատելու համար բժիշկների և միջին բուժանձնակազմի վերապատրաստումն ու արագ մասնագիտացումը,

ժ. տարահանման ընթացքում բնակչության բժշկական ապահովումը,

ժա. մասնակցությունը տարահանված բնակչության կենսաապահովման աշխատանքներին,

ժբ. անհրաժեշտության դեպքում սննդամթերքի, ինչպես նաև որպես մարդասիրական օգնություն ներկրվող հիգենիայի պարագաների որակի և պիտանիության նկատմամբ հսկողության աջակցությունը,

ժգ. որպես մարդասիրական օգնություն ներմուծվող դեղամիջոցների որակի նկատմամբ հսկողության իրականացումը և անհրաժեշտության դեպքում դրանց պարզեցված կարգով հավաստագրումը,

ժդ. բնակչության պաշտպանության բնագավառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

5) Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գործառույթներն են՝

ա. համակարգման ոլորտում գործող կազմակերպությունների կայուն գործունեության կազմակերպումը,

բ. բնակչության պաշտպանության միջոցառումների ինժեներական ապահովման աշխատանքների կազմակերպումը և իրականացումը,

գ. վթարված ինժեներական կառույցների գնահատումը և վերականգնման կազմակերպումը,

դ. մասնակցությունը հատուկ հետախուզության իրականացմանը,

ե. ճանապարհների վնասված և փլուզվածքներով խցանված հատվածներով ու կամուրջներով անցանելիության ապահովումը,

զ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

6) Շիրակի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գործառույթներն են՝

ա. համակարգման ոլորտում գործող կազմակերպությունների կայուն գործունեության կազմակերպումը,

բ. տուժած տարածքներից գյուղատնտեսական կենդանիների, գյուղատնտեսական արտադրանքի դուրսբերման աշխատանքների կազմակերպումը,

գ. որպես մարդասիրական օգնություն ներկրվող սննդամթերքի որակի և պիտանիության նկատմամբ հսկողության իրականացման աջակցությունը,

դ. գյուղատնտեսական հումքի, սարքավորումների և պարենի, այլ նյութական միջոցների պաշարների ստեղծումն ու պահպանումը,

ե. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

7) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գործառույթներն են՝

ա. համակարգման ոլորտում գործող կազմակերպությունների կայուն գործունեության կազմակերպումը,

բ. արտակարգ իրավիճակներում հատուկ նշանակություն ունեցող, այլ ապրանքներ արտադրող և ներմուծող կազմակերպությունների ու անհատ ձեռներեցների հետ նախօրոք կնքված պայմանագրերի համաձայն անհրաժեշտ գնումների իրականացումը,

գ. պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ տուժած բնակչության և կազմավորումների անձնակազմերի՝ սննդամթերքով, առաջին անհրաժեշտության ապրանքներով և նյութատեխնիկական միջոցներով ապահովումը,

դ. արտակարգ իրավիճակի պայմաններում տնտեսության կայուն աշխատանքի ապահովումը,

ե. բնակչության կենսաապահովումը,

զ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

8) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գործառույթներն են՝

ա. համակարգման ոլորտում գործող կազմակերպությունների կայուն գործունեության կազմակերպումը,

բ. մարզային և համայնքային տարահանման պլաններով նախատեսված հանրակրթական դպրոցներում և այլ ուսումնական հաստատություններում տարահանման և ընդունման հավաքակետերի ծավալման դեպքում անհրաժեշտ գույքի և միջոցների ապահովման կազմակերպումը,

գ. բնակչության պաշտպանության բնագավառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

9) Պաշտպանության նախարարության Շիրակի զինվորական կայազորի գործառույթներն են՝

ա. արտակարգ իրավիճակների դեպքում գործողությունների և փոխգործողությունների պլանների ճշգրտումը և պլաններով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. համակարգի զինծառայողների և հատուկ ծառայողների պաշտպանության կազմակերպումը,

գ. իր ենթակայության զորամասերի կայուն գործունեության կազմակերպումը,

դ. օդային հետախուզության կազմակերպման իրականացումը,

ե. ճանապարհների վնասված և փլուզվածքներով խցանված հատվածներով ու կամուրջներով անցանելիության ապահովման աջակցությունը,

զ. փրկարարական աշխատանքների իրականացման համար ուժերի ու միջոցների տրամադրումը և փրկարարական աշխատանքներին մասնակցությունը,

է. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

10) ՆԳՆ ոստիկանության Շիրակի մարզային վարչության գործառույթներն են՝

ա. արտակարգ իրավիճակների դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. համակարգի աշխատողների պաշտպանության կազմակերպումը,

գ. արտակարգ իրավիճակում համայնքներում, պաշտպանական, տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող, ինչպես նաև բնակչության պաշտպանության տեսանկյունից բարձր վտանգավորություն ներկայացնող կազմակերպություններում, պահպանվող օբյեկտներում, բնակչության տարահանման (ընդունման) հավաքակայաններում և տեղաբաշխման վայրերում, փրկարարական ուժերի և միջոցների շարժման երթուղիներում հասարակական կարգի պահպանության կազմակերպումն ու ապահովումը,

դ. պետական սեփականության, բնակչության ունեցվածքի պահպանության կազմակերպումը և իրականացումը,

ե. մասնակցությունը բնակչության ազդարարմանը և իրազեկմանը,

զ. աղետի գոտում անցագրային ռեժիմի և պարետային ծառայության կազմակերպումն ու իրականացումը,

է. մարզի ռազմավարական նշանակություն ունեցող և կենսաապահովման կարևորագույն օբյեկտների պահպանության ուժեղացումը,

ը. ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովումը,

թ. աղետի հետևանքների վերացման գործում ներգրավված ուժերի, բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանմանն ուղղված անխափան երթևեկության ապահովումը,

ժ. մասնակցությունը փրկարարական աշխատանքներին,

ժա. մասնակցություն մահացածների հաշվառման աշխատանքներին,

ժբ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

11) Շիրակի մարզում գործող կապի օպերատորների տարածքային կենտրոնների գործառույթներն են՝

ա. համակարգի աշխատողների պաշտպանության կազմակերպումը,

բ. բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման ընթացքում անխափան կապի ապահովումը,

գ. բնակչության և կառավարման մարմինների ազդարարման տեխնիկական ապահովումը,

դ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

12) «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության «Հյուսիս» շահագործման տնօրինության «Շիրակ» տեղամասի գործառույթներն են՝

ա. տարահանման պլանների ճշգրտումը և պլաններով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. իր ենթակայության կազմակերպությունների կայուն գործունեության կազմակերպումը,

գ. ջրային ռեսուրսների և համակարգերի պաշտպանական միջոցառումների իրականացման ապահովումը,

դ. տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ տարահանված բնակչության և կազմավորումների անձնակազմի՝ ջրով ապահովումը,

ե. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

13) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Ղարս» մասնաճյուղի գործառույթներն են՝

ա. արտակարգ իրավիճակների դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. իր ենթակայության կազմակերպությունների կայուն գործունեության կազմակերպումը,

գ. էներգահամակարգի գործունեության կայունության ապահովումը,

դ. էներգահամակարգի անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման կազմակերպումը,

ե. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

14) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Շիրակի գազաֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղի գործառույթներն են՝

ա. արտակարգ իրավիճակների դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. իր ենթակայության կազմակերպությունների կայուն գործունեության կազմակերպումը,

գ. բնական գազի, մազութի և այլ էներգակիրների անհրաժեշտ պաշարների ստեղծումը,

դ. տուժած տարածքների էներգամատակարարման վերականգնումը, աշխատանքային տեղամասերում, առանձին հատվածներում դրանց դադարեցումը կամ վերաթողարկումը,

ե. մասնակցությունը տարահանված բնակչության կենսաապահովման գործին,

զ.բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

15) Գյումրու «Շիրակ» օդանավակայանի գործառույթներն են՝

ա. արտակարգ իրավիճակների դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. համակարգի աշխատողների և օդանավակայաններում գտնվող ուղևորների պաշտպանության կազմակերպումը,

գ. օդանավակայանի տարածքում գտնվող շենքերի, շինությունների ու օբյեկտների պաշտպանության, փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը,

դ. մարդասիրական օգնության ստացման, բեռնաթափման և այլ պետություններից ժամանած փրկարարական ուժերի ընդունման ապահովումը,

ե. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

16) գիտությունների ազգային ակադեմիայի Ա.Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպության գործառույթներն են՝

ա. օդի իոնիզացնող ճառագայթման մակարդակի չափումը,

բ. գետնամերձ օդի իոնիզացնող ճառագայթման մակարդակի չափումը,

գ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

17) ՀՀ առողջապահության նախարարություն «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Շիրակ» մասնաճյուղի գործառույթներն են՝

ա. արտակարգ իրավիճակների դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. տարահանվող բնակչության տարահանման (ընդունման) հավաքակայաններում և տեղաբաշխման վայրերում սանիտարահիգիենիկ իրավիճակի մշտական հսկողության իրականացումը,

գ. բնակչության պաշտպանության բնագավառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

18)ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Շիրակի մարզային կենտրոնի գործառույթներն են՝

ա. արտակարգ իրավիճակների դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. տարահանված բնակչությանը և կազմավորումներին տրամադրվող սննդամթերքի անվտանգության ապահովումը,

գ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

19) Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Շիրակի մարզի Գյումրու ջրաբանական կայանի և Գյումրու, Ամասիայի, Աշոցքի, Արթիկի օդերևութաբանական կայանների գործառույթներն են՝

ա. մարզի տարածքում օդի, ջրային տարածքների, հողի իոնիզացնող ճառագայթման մակարդակների հայտնաբերման նպատակով հետախուզության և դիտարկման կազմակերպումը,

բ. օդերևութաբանական իրավիճակի կանխորոշումը,

գ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

20) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային հեռուստառադիոընկերությունների գործառույթներն են՝

ա. պահուստային շարժական և շարժական արբանյակային կայանների ծավալումը և աշխատանքի կազմակերպումը,

բ. բնակչության պահեստաձևի կարգի և վարքի կանոնների մասին իրազեկումը,

դ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.,

ե. փրկարարական աշխատանքների ընթացքի և աղետի հետևանքների վերացման վերաբերյալ հաղորդումների հեռարձակումը.

21) ‹‹Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն›› պետական ոչ առևտրային կազմակերպություն հյուսիսային տարածաշրջանային կենտրոնի գործառույթներն են՝

ա. համապատասխան մարմիններին ընթացիկ սեյսմիկ ռեժիմի, տեղի ունեցած սեյսմիկ իրադարձության (երկրաշարժի), ինչպես նաև սեյսմիկ իրավիճակի զարգացման մասին պարբերաբար տեղեկատվության տրամադրումը,

բ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

22) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթներն են՝

ա. արտակարգ իրավիճակների դեպքում համայնքի բնակչության ազդարարումը,

բ. միջոցառումների իրականացումը՝ համայնքային ենթակայության օբյեկտների անվտանգ աշխատանքն ապահովելու նպատակով,

գ. համայնքի բնակչության, գյուղատնտեսական կենդանիների ու ապրանքների տարահանման, ժամանակավոր կացարաններով և առաջին անհրաժեշտության միջոցներով բնակչության ապահովումը,

դ. տարահանման (ընդունման) հավաքակայանների ծավալումը և հավաքակայանների գործունեության ապահովումը,

ե. աջակցություն մահացածների հուղարկավորության կազմակերպմանը,

զ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը:

## Պլանի իրավական հիմքերը

4. Պլանի իրավական հիմքերն են՝ Հայաստանի Հանրապետության օրենքները, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները և այլ իրավական ակտեր՝

1) «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը,

2) «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը,

3) «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքը,

4) ՀՀ կառավարության 2010թ. հունիսի 24-ի «Տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսաապահովման կարգը հաստատելու մասին» N 824-Ն որոշումը,

5) ՀՀ կառավարության 2011թ. օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքներից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման կարգը հաստատելու մասին» N 1180-Ն որոշումը,

6) ՀՀ կառավարության 2000թ. սեպտեմբերի 28-ի «Բնակչության պատսպարման կարգը հաստատելու մասին» N 592 որոշումը,

7) ՀՀ կառավարության 2003թ. նոյեմբերի 11-ի «Քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» N 1532-Ն որոշումը,

8) ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու մասին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N 134-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 46-Ն որոշումը, ՀՀ կառավարության 2004թ. հուլիսի 29-ի «Ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի ստեղծման և գործունեության ապահովման կարգը սահմանելու մասին» N 1064-Ն որոշումը:

## II. ՏԱՐԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

### Մարզի տարածքում հնարավոր իրավիճակը արտակարգ իրավիճակների և ռազմական դրության դեպքում

5. Երկրաշարժի հետևանքով մարզի տարածքում հնարավոր է առաջանա հետևյալ իրավիճակը՝

1) մարզի տարածքն աչքի է ընկնում իր բարդ լեռնային ռելիեֆով: Լեռնային ռելիեֆն ու կտրուկ մայրցամաքային կլիման նախասահմանել են մարզի տարածքում բնական վտանգների տեսակները՝ ուժեղ երկրաշարժեր, սողանքներ, փլուզումներ, սելավներ, կարկուտ, ուժեղ քամիներ, շանթահարում, երաշտ, հորդառատ անձրևներ: Եվ՛ ծավալով, և՛

դրսևորման հաճախականությամբ առավել ծանր տարերային աղետներից մեկն է երկրաշարժը: Մարզի տարածքն ամբողջությամբ սեյսմավտանգ է, գտնվում է 8-11 բալ ուժգնությամբ սեյսմիկ գոտում և պարբերաբար ենթարկվում է երկրաշարժերի ավերիչ ազդեցությանը.

2) մեծ վտանգ են ներկայացնում նաև Սպիտակ-Ձորաշեն օջախները, ինչպես նաև Ջավախքի օջախի գոտին, որը հիմնական վտանգ է ներկայացնում Աշոցք և Ամասիա համայնքների համար.

3) հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սպիտակի երկրաշարժը հնարավոր առավել մեծ վնաս կհասցնի մարզի տարածքին, հնարավոր իրադրության գնահատականը տրված է Սպիտակի երկրաշարժի դեպքում (9-10 բալ): Նշված օջախի նկատմամբ բնակավայրերի հեռավորությունից կախված՝ նրանց տարածքները կենթարկվեն տարբեր ուժգնության ցնցումների.

4) առավել ծանր իրավիճակ կստեղծվի Գյումրի քաղաքում, որտեղ կենտրոնացված է մարզի առավել մեծ թվով բնակչության թվաքանակը 155997, հրդեհապայթյունավտանգ 36 և քիմիական վտանգավոր 2 օբյեկտներ: Հնարավոր ուժեղ երկրաշարժի հետևանքով, որպես երկրորդային խոցման օջախներ, կարող են վթարվել մարզի Մանթաշի, Վարդաքարի, Սառնաղբյուրի, Արփի լճի, Թավշուտի, Կառնուտի և Ախուրյանի հիդրոտեխնիկական կառույցների պատվարները, որի հետևանքով մարզի բազմաթիվ բնակավայրեր կհայտնվեն ջրածածկման գոտում, (Շիրակի մարզի բնակավայրերը, Ախուրյանի հիդրոտեխնիկական կառույցի՝ ջրամբարի պատվարի փլուզման դեպքում ջրածածկման գոտում չեն հայտնվում):

5) երկրաշարժի հետևանքով հնարավոր են բազմաթիվ երկրորդական վտանգավոր երևույթներ՝ փլուզումների, սողանքների, սելավների տեսքով, որոնք իրենց հերթին կստեղծեն լրացուցիչ բազմաթիվ խոցող գործոններ: Կավերվեն և կվնասվեն ճանապարհային շինություններն ու կառույցները, կխցանվեն ավտոմայրուղիները.

6) հնարավոր են նաև մասնակի վնասվածքներ Գյումրի քաղաքի թվով երկու կարևորագույն նշանակության կամուրջների կոնստրուկցիաներում՝ դրանցից մեկը 1988թ.-ի երկրաշարժին կանգուն մնացած և դեռ չամրացված Գյումրի քաղաքի ռազմավարական նշանակության ամենամեծ ավտոմոբիլային կամուրջը, որը կառուցված է «Գյումրի Չայ» գետակի վրա՝ Ալեք Մանուկյան փողոցում, որը քաղաքի 2 կենտրոնական մասերը միացնում է իրար: Կամուրջի երկարությունը՝ 175մ. լայնությունը՝ 20մ., բարձրությունը՝ 30մ., թույլատրելի կրողականությունը՝ 120տ., թռիչքների թիվը՝ 4, իսկ մյուսը՝ Գյումրու Տերյան փողոցի ու Գարեգին Նժդեհի հրապարակի խաչմերուկում գտնվող 45մ. երկարությամբ, 12մ. լայնությամբ

և 20մ. բարձրությամբ ամենամեծ երկաթուղային կամուրջը, որի տակով անցնում է Գյումրի-Երևան, Գյումրի-Ախուրյան ավտոմոբիլային ճանապարհները:

6. Մարզի տարածքի քիմիական վտանգավոր օբյեկտներում վթարի դեպքում հնարավոր է առաջանա հետևյալ իրավիճակը՝

1) քիմիապես վտանգավոր օբյեկտում՝ «Գյումրի-գարեջուր» ՍՊԸ-ում ամոնիակի արտանետման հետևանքով քիմիական վարակվածության գոտում կհայտնվեն 900 մարդ,

2) բնակչության շրջանում քիմիական վարակվածության ընդհանուր բնութագիրը կունենա այսպիսի տեսք՝

ա. մահացու թունավորվածներ -------- 10 % --- 90 մարդ.

բ. ծանր թունավորվածներ ----------- 20 % --- 180 մարդ.

գ. թեթև թունավորվածներ ----------- 30 % -- 270 մարդ.

3) մարզում ուժեղ ներգործող թունավոր նյութեր (ՈՒՆԹՆ) օգտագործող օբյեկտների և քիմիական վարակվածության հնարավոր ծավալների վերաբերյալ տվյալները ներկայացված են Աղյուսակ N 1-ում՝

Աղյուսակ N 1

| Հ/Հ | Անվանումը | ՈՒՆԹՆ | ՈՒՆԹՆ-ի քանակը (տ) | Կայունությունը տեղանքում (ժամ) | Քիմիական վարակի հնարավոր մասշտաբները | | | | Պաշտպանու-թյան ենթակա անձնակազմ/ շրջակա բնակչություն (մարդ) | Ծանոթա-գրություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ՈՒՆԹՆ-ի տարածման խորությունը | | ՈՒՆԹՆ-ի օջախի մակերեսը | | | |
| | | | | | առաջնային ամպի խորությունը (կմ) | երկրորդային ամպի խորությունը (կմ) | խոցման կոնցենտրացիայ-ով (քառ. կմ) | մահացու կոնցենտրացիա-յով (քառ. կմ) | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 1. | «Գյումրի-գարեջուր» սահմանափակ պատասխանատվութ-յանբ ընկերություն | ամոնիակ | 3,7 | 6 | 0.49 | 1.07 | 0.04 | 0.2 | 150/900 | Առկա է նաև 3տ պահեստա վորված ամոնիակ |
| 2. | «ԱԼԵՔՍ ԷՆԴ ՀՈԼԴԻՆԳ» սահմանափակ պատասխանա տվությամբ ընկերություն | ամոնիակ | 1.5 | 6 | 0.28 | 0.6 | 0.033 | 0.2 | ---- | Ձեռնարկութ յունը չի աշխատում |

7. Մարզի թվով 6 ջրամբարների պատվարների հնարավոր փլուզման դեպքում հնարավոր է առաջանա հետևյալ իրավիճակը՝

1) աղետալի ջրածածկման գոտում կհայտնվեն ամբողջությամբ կամ մասնակի 33 բնակավայրեր և այդ բնակավայրերից տարահանվող բնակչության թիվը կազմում է՝ 23168 մարդ:

8. Մարզում սողանքների հետևանքով հնարավոր է առաջանա հետևյալ իրավիճակը՝

1) Շիրակի մարզի տարածքում սողանքային տեղամասերը ունեն բարդ երկրաբանական կառուցվածք՝ սահող տիպի, որոնց հիմնական պատճառը ստորերկրյա ջրերի հոսքն է: Մարզում կան ակտիվ և պասիվ սողանքներ, 10մ և ավելի հողաշերտի խորությամբ 5-100 հա մակերեսով: Ակտիվ սողանքային տարածք է առաջացել Առափի գյուղի մոտ՝ 100մ ավտոմայրուղու ուղղությամբ և բնակավայրի արևմտյան հատվածով: Համեմատաբար դանդաղ շարժվող սողանքներ են դիտվում Վարդաղբյուր, Մեծ Սարիար, Հովիտ, Կամո, Լեռնագյուղ և Ջաջուռ բնակավայրերի շրջակա տարածքներում: Մարզի սողանքային տարածքների բնութագրական տվյալները ներկայացված են Աղյուսակ N 2-ում:

Աղյուսակ N 2

| Հ/Հ | Սողանքի գտնվելու վայրը | Սողանքի մակերեսը (հա.) | Ազդեցության տակ գտնվող բնակավայրեր, բնակիչների թիվը, հաղորդակցությունների համալիր, գետերի խցանում, մշակվող հողատարածքներ |
|---|---|---|---|
| 1. | Լեռնագյուղ բնակավայրից 1կմ և 1,5 կմ դեպի արևմուտք | 5 - 50<br>5 - 50 | Համայնքի ՕԿՋ և ջրագծեր |
| 2. | Մեծ Սարիար բնակավայրից 3կմ դեպի արևմուտք | 5 | Մշակվող հողատեսքեր |
| 3. | Կամո բնակավայրից 3կմ դեպի հյուսիս-արևելք | 5 | Ոչ բնակելի օգտագործելի տարածք |
| 4. | Հովիտ բնակավայրից 400մ դեպի հարավ-արևելք | 5 - 50 | Ներհամայնքային նշանակության ավտոճանապարհը և կամուրջը |
| 5. | Առափի բնակավայրից 1կմ դեպի արևմուտք | 5 - 50 | 100 բնակելի տների թվով 160 բնակիչներ, 30հա. տնամերձ, Առափի-Հայկավան ավտոճանապարհի հատված |
| 6. | Վահրամաբերդ բնակավայրից 1կմ դեպի հարավ-արևմուտք | 5 - 50 | Ոչ բնակելի անօգտագործելի տարածք, Ախուրյան գետի աջակողմյան հատված |
| 7. | Ջաջուռ բնակավայրից 2կմ դեպի հյուսիս-արևելք | 50 - 100 | Գյումրի - Վանաձոր մայրուղու և երկաթգծի Ջաջուռի թունելի հատված |

9. Ռազմական գործողությունների արդյունքում մարզի տարածքում հնարավոր է առաջանա հետևյալ իրավիճակը՝

1) հավանական հակառակորդի զինված ուժերի ավիացիայի, հրթիռահրետանային և դիվերսիոն հետախուզական խմբերի ազդեցության թիրախ Մարզում հնարավոր է հանդիսանան.

ա.ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի, տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերը, պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ստորաբաժանումների հիմնական տեղակայման վայրերը և կառավարման պահեստային կետերը.

բ.պաշտպանական, տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող, բարձր վտանգավորություն ներկայացնող, հատուկ, կարևորագույն նշանակություն ունեցող օբյեկտները և կազմակերպությունները, ջրամբարները.

գ.Վանաձոր-Գյումրի, Գյումրի-Արմավիր մայրուղային գազատարները և թվով 5 գազաբաշխիչ կայանները.

դ.մարզի տարածքում գտնվող հիդրոէլեկտրակայանները.

ե.«Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 220 ԿՎ լարման թվով 1 ենթակայանը և այդ ենթակայանից տարբեր ուղղություններով դուրս եկող 220 ԿՎ լարման օդային գծերը, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 110 ԿՎ լարման թվով 2 ենթակայանները և դրանց կապող 110 ԿՎ լարման օդային գծերը.

զ.Գյումրի և Արթիկ քաղաքները սնուցող ջրամատակարարման համակարգերը.

է.ֆիքսված և բջջային հեռախոսակապի հանգույցներն ու ապահովող սարքավորումները.

ը.մարզի տարածքում գտնվող հեռուստաաշտարակները, գործող տեղական հեռուստաընկերությունները.

թ.Գյումրի և Արթիկ քաղաքների «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության բաժանմունքները.

ժ.ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհները ու ճանապարհային կառույցները, օդային հաղորդակցությունը:

2)լրիվ և ուժեղ ավերածությունների գոտում կարող են հայտնվել Գյումրի, Արթիկ և Մարալիկ քաղաքները, հասարակական շենքերի և օբյեկտների փլուզումների ծավալը կկազմի 300000 $մ^3$.

3)ՀՀ Շիրակի մարզը արևմուտքից սահմանակից է Թուրքիային՝ 117կմ. իսկ հյուսիսից Վրաստանին՝ 66 կմ : Մարզի սահմանամերձ գոտու բնակչության մասնակի տարահանումը նախատեսվում է իրականացնել պետական սահմանին հարակից 10կմ. գոտում գտնվող բնակավայրերից բնակչության մասնակի տարահանման եղանակով,

4)տարահանվող բնակչությունը ժամանակավորապես վերաբնակեցվում է պետական սահմանից 15կմ.-ից դուրս գտնվող բնակավայրերում, որտեղ տարահանվողներն ապահովվում են ժամանակավոր կացարաններով, սննդամթերքով, բուժսանիտարական սպասարկմամբ, ինչպես նաև առաջնահերթ անհրաժեշտության կենսաապահովման և այլ միջոցներով,

5)սահմանամերձ 10 կմ. գոտում ընդգրկվում են թվով 6 համայնքների 50 բնակավայրերի **195104** մարդ, որից 49 գյուղական բնակավայրերի **39338 մարդ** և քաղաք Գյումրին **155997** մարդ բնակչությամբ, որից գյուղական բնակավայրերիցրից տարահանվող բնակչության թվաքանակը կազմում է **19906** մարդ, իսկ Գյումրի քաղաքից **74442** մարդ, ընդամենը մարզից տարահանվող բնակչության թվաքանակը կազմում է **94348** մարդ, մարզի 10 կիլոմետրանոց սահմանամերձ գոտուց ըստ տարիքային խմբերի տարահանված բնակչության հաշվարկը ներկայացված է հավելված №2-ում:

6)տարահանված բնակչության ընդունող բնակավայրերը 46 են, որից 2 ը քաղաքային՝ **27101** մարդ, 44 ը գյուղական՝ **61625** մարդ, ընդունող բնակավայրերի բնակվող բնակչության ընդհանուր թվաքանակը կազմում է **88726** մարդ,

7)տարահանված բնակչության տեղաբաշխման վայրերում կենսաապահովման միջոցների հաշվարկները ներկայացված են համապատասխանաբար՝ տարահանվող բնակչության սննդամթերքով ապահովման հաշվարկը ներկայացված է հավելված N 3-ում, մինչև մեկ տարեկան տարահանված երեխաների սննդամթերքի ապահովման հաշվարկը հավելված N 4-ում, տարահանվող բնակչությանն անհրաժեշտ հագուստի և առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովման հաշվարկը՝ հավելված N 5-ում:

**Տարահանված բնակչության տեղաբաշխման վայրերում կենսաապահովման ռեսուրսներով պահանջարկների բավարարման փաստացի մակարդակը**

10. Տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսաապահովումը կազմակերպում և իրականացնում են տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինները և կազմակերպությունները (անկախ կազմակերպաիրավական ձևից):

11. Մարզի տարածքում տարերային ու տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների, ինչպես նաև ռազմական գործողությունների հետևանքով տարահանված և տեղաբաշխված բնակչության կենսաապահովման առաջնահերթ կարիքները, առաջին հերթին, բավարարվում են կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև մարդասիրական օգնության ձևով այլ պետությունների կառավարությունների, միջազգային մարդասիրական կազմակերպությունների կողմից տրամադրված միջոցների հաշվին:

12. Բնակչության կենսաապահովումը, դա բնակչության կենսագործունեության համար նրա ֆիզիոլոգիական, նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարման նպատակով անհրաժեշտ նվազագույն պայմանների ստեղծումը և պահպանումն է:

13. Տարահանված բնակչության տեղաբաշխման վայրերում կենսաապահովման ռեսուրսներով պահանջարկների բավարարման փաստացի մակարդակը (սեփական ռեսուրսներ, արտադրական հնարավորություններ) ներկայացված է Աղյուսակ N 3-ում:

Ց Ա Ն Կ

# ՏԱՐԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐՈՎ ՊԱՀԱՆՋԱՐԿՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՄԱՐԶՈՒՄ ԱՌԿԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Աղյուսակ N 3

| Արդյունաբերության ճյուղերը | Կազմակերպության անվանումը, հասցեն | Տնօրենի ազգանունը, անունը հեռախոսի համար | Արտադրական հզորությունը տարեկան |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1. Շինանյութերի արտադրության ձեռնարկություններ | «Տուֆաբլոկներ» փակ բաժնետիրական ընկերություն, ք.Արթիկ, Մանթաշյան փողոց | Սահակյան Արթուր 0244-5-25-50, 094-48-32-42 094-60-34-60 | 8000 (մետր քառակուսի) տուֆաբլոկ |
| | «Արթիկ-տուֆ» փակ բաժնետիրական ընկերություն, ք.Արթիկ, Տուֆագործների փողոց | Պետրոսյան Թուրինջ 093-35-25-55 | 150000 հատ քար |
| | «Մերձմոսկովյան» բաց բաժնետիրական ընկերություն, գ.Ախուրյան, Գյումրու խճուղի 3, փակուղի 11 | Ադամյան Արամ 7-01-66, 094-44-44-32 | 5000-10000 (մետր քառակուսի) ասֆալտ |
| | «Արգիկ» բաց բաժնետիրական ընկերություն, գ.Ախուրյան, Գյումրու խճուղի, 13 | Ռմբոյան Տիգրան 093-31-43-99 | 5000-10000 (մետր խորանարդ) բետոն |
| 2.Թեթև արդյունաբերության ձեռնարկություններ և արտադրամասեր | «Արշալույս» փակ բաժնետիրական ընկերություն, ք.Գյումրի, Խրիմյան Հայրիկ 46 | Զաքարյան Հովիկ 093/18-80-80 0312-5-46-68 | 100000 հատ տրիկոտաժեղեն |
| | «Հարութ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, ք.Գյումրի, Փանյան 2 | Կիրակոսյան Հարութ 091-21-74-32 | 25000 հատ տրիկոտաժեղեն |
| | «ՆԱՅԹԵՔՍ» բամբակամանվածքային ֆաբրիկա, ք.Մարալիկ, Գագարինի 1 | Գասպարյան Գևորգ 091-41-72-85 | 40000 հատ գուլպա և տրիկոտաժեղեն |
| | «Նելլի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, ք.Գյումրի, Արտյոմ Պետրոսյան 49 | Դարբինյան Թամարա 091-40-92-75 | 5-7000 հատ տրիկոտաժեղեն |

| | | | |
|---|---|---|---|
| | «ԼԵՆՏԵՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, ք.Գյումրի, Վազգեն Սարգսյան 111/3 | Գոմցյան Կարեն 094-427-410 0312-6-61-62 | 100000 հատ գուլպա և տրիկո-տաժեղեն |
| | «WSK» փակ բաժնետիրական ընկերության «Ամասիայի կարի ֆաբրիկա», Գ.Ամասիա | Խաչատրյան Ամրամ 0246-2-20-10, 094-89-08-98 | 4000 հատ Բնվորական հագուստ |
| 3. Մսի, կաթնամթերքի և ըմպելիքների արտադրության ձեռնարկություններ | «Իգիթ կաթնամթերքի գործարան» , սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, գ.Ազատան | Իգիթյան Անդրանիկ 091-21-55-35 | 1միլիոն լիտր կաթի վերամշակում |
| | «Գյումրի-գարեջուր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, ք.Գյումրի, Երևանյան խճուղի 171 | Սանոյան Արշալույս 0312-4-28-48, 098-20-21-01 | 2,5միլիոն շիշ |
| | «ԱԼԵՔՍ ԷՆԴ ՀՈԼԴԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, ք.Գյումրի, Հացիկի խճուղի 6/1 | Հովհաննիսյան Արայիկ 094-84-05-01 | Սառնարանային տնտեսություն, 20-30տ մսամթերքի պահպանություն |
| | «Ամասիայի պանրագործարան» բաց բաժնետիրական ընկերություն, գ.Ամասիա | Մխիթարյան Վարդան 094/42-14-16 | 150000 լիտր կաթի վերամշակում |
| | «Աշոցքի պանրագործարան» բաց բաժնետիրական ընկերություն գ.Մուսայելյան | Բաղդասարյան Ժորա 077-72-72-78 | 1500000 լիտր կաթի վերամշակում |
| | «ԱԼԵՔՍ ԷՆԴ ՀՈԼԴԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, Ախուրյանի շաքարի գործարան, գ.Ախուրյան | Գլխ.ինժ. Մանուկյան 093-918-911 | օգտագործող հումքը՝ շաքարեղեգի կոնցենտրատ |
| | «Բանդիվան ԿԱԹ» ՍՊԸ գ.Բանդիվան | Ներսիսյան Էդիկ 098-59-09-29 | 200000լ կաթի վերամշակում |
| 4.Ճանապարհա շինական կազմակերպություններ | «Ճանշին» փակ բաժնետիրական ընկերություն, գ.Փանիկ համայնք | Բաղդասարյան Վահագ 093-42-49-44 | |
| | «Մերձմոսկովյան» բաց բաժնետիրական ընկերություն, գ.Ախուրյան, Գյումրու խճուղի 3, փակուղի 11 | Ադամյան Արամ 094-44-44-32 Ադամյան Արտակ 094-44-44-56 | 5000-7000 (մետր քառակուսի) ասֆալտ |
| | «Անիի ճանապարհների շինարարություն և շահագործում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, ք.Մարալիկ, Հրանտ Շահինյան փողոց, փակուղի 11, 2 շենք | Առաքելյան Կարապետ 093-43-42-87 | |

| | | | |
|---|---|---|---|
| | «Աշոցքի ավտոտրանսպորտ և ճանապարհներ» փակ բաժնետիրական ընկերություն, գ.Աշոցք | Կարապետյան Մարսել 094-00-12-01 | |

## ՏԱՐԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՎԱՅՐԵՐԻ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐԳԸ

### Տեղեկատվության ապահովումը

14. Տեղեկատվական ապահովումը ներառում է՝

1) արտակարգ իրավիճակի առաջացման մասին առաջին հաղորդագրությունը զանգվածային լրատվամիջոցներին (այսուհետ՝ ԶԼՄ) տրամադրում է ՀՀ ՆԳՆ ՓԾ Շիրակի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ պետը: Հանրային իրազեկմանն ուղղված հետագա գործընթացներն ապահովում է միջգերատեսչական միացյալ լրատվական կենտրոնը (այսուհետ՝ ՄՄԼԿ), որն աղետի դեպքում կազմակերպվող, շահագրգիռ տարբեր գերատեսչությունների և կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված խումբ է: ՄՄԼԿ-ն գործում է որպես միջնորդ իշխանությունների և հասարակության միջև, հետևում է իրադարձությունների ընթացքին, անընդհատ կապի մեջ է ՀՀ ՆԳՆ ՓԾ Շիրակի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ-ի հետ,

2) ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության կողմից իրականացվում է պետական կառավարման մարմինների՝ ՄՄԼԿ-ում ընդգրկված համապատասխան աշխատողների ազդարարումը և, ՄՄԼԿ-ի տնօրենից ճշտելով ՄՄԼԿ-ի տեղակայման վայրը, կազմակերպվում է կենտրոնի անձնակազմի հավաքը,

3) արտակարգ իրավիճակի վերաբերյալ որևէ հրատապ հաղորդագրության դեպքում կազմվում է բնակչության վարքականոնների մասին հաղորդագրություն, որը փոխանցվում է բջջային կապի օպերատորներին՝ բաժանորդներին SMS հաղորդագրություններ ուղարկելու համար:

Այս հաղորդագրությունները տրվում են նաև տեղական հեռարձակման հանգույցներով:

Անհրաժեշտության դեպքում Հայաստանի հանրային հեռուստատեսությամբ և Հայաստանի հանրային ռադիոյով «Հատուկ թողարկում» խորագրի ներքո պարբերաբար հեռարձակվում է տեղեկատվություն բնակչության վարքականոնների, իրավիճակի, հետագա հնարավոր զարգացումների և իրականացվելիք միջոցառումների մասին,

4) ՄՄԼԿ-ն կազմակերպում է աղետի ընթացքը լուսաբանող մամուլի ասուլիս՝ շահագրգիռ պետական կառավարման մարմինների, կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, ինչպես նաև հարցազրույցներ ներքին գործերի նախարարի մամլո խոսնակի, ներքին գործերի նախարարության պաշտոնյաների հետ: Համակարգում է ԶԼՄ-ների աշխատանքը, վերջիններիս ապահովում անհրաժեշտ տեղեկատվությամբ, պատասխանում հասարակության հարցերին, ամփոփում և բնակչությանը տեղեկատվություն ներկայացնում կառավարման

մարմինների գնահատականների, որոշումների ու ձեռնարկվող քայլերի մասին, հետևում դրսի աղբյուրներից ներթափանցող տեղեկատվությանը, կազմակերպում է ԶԼՄ-ների ներկայացուցիչների տեղափոխումը, համակարգում աղետի գոտում ճեպազրույցների կազմակերպման աշխատանքները,

5) ՄՄԼԿ-ն իրականացնում է շուրջօրյա օպերատիվ աշխատանք՝ համակարգելով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից ստացված օպերատիվ տեղեկատվության ճշգրտման, մշակման, ամփոփման ու լրատվամիջոցներին պարբերաբար տրամադրելու գործընթացը:

Կացարաններով ապահովումը

15. բնակչության՝ կացարաններով ապահովումը և տարահանման կազմակերպումը՝

1) արտակարգ իրավիճակների հետևանքով (ռազմական գործողություններ, տարերային և տեխնածին աղետներ) անօթևան մնացած բնակչությունը կացարաններով ապահովվում է հետևյալ ձևերով՝

ա. ապակենտրոնացված տեղաբաշխում,

բ. տեղավորում ճամբարներում,

գ. կոլեկտիվ տեղավորում.

2) ապակենտրոնացված տեղաբաշխման դեպքում անօթևան բնակչությանը տեղավորում են բնակվելու համար պիտանի տներում՝ իրենց սեփական տներում, համատեղ կամ առանձին,

3) ճամբարներում տեղավորման դեպքում անօթևան բնակչությանը տեղավորում են վրաններում՝ հիմնելով վրանային ճամբարներ,

4) կոլեկտիվ տեղավորումը իրականացվում է անօթևան բնակչությանն ավերածությունների գոտուց դուրս գտնվող հասարակական շենքերում տեղավորման միջոցով, որի համար նախատեսվում է ավերված գոտիներից բնակչության տարահանում անվտանգ տարածքներ:

Ջրամատակարարում և կենցաղ – տնտեսական ապահովումը

16. Ջրի ծավալը, որը կարող է տրամադրվել բնակչությանը, որոշվում է «ջրի հայթայթում – մաքրում – մղում մայրուղային ջրատարներ – բաշխիչ ցանցեր» տեխնոլոգիական օղակների հնարավորությունների համաձայն: Տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում ջրամատակարարման հնարավորությունների որոշման դեպքում հաշվի են առնվում ջրամատակարարման ստացիոնար համակարգերը, ջրհորները, արտեզյան հորատանցքերը, ջրի մատակարարման տրանսպորտային միջոցները:

17. Անհրաժեշտ է գնահատել նաև շարժական և ստացիոնար զուգարաններով, հուղարկավորությունների իրականացման, ինչպես նաև կեղտաջրերի հեռացման և վնասազերծման ապահովման հնարավորությունները:

18. Մարզի 10 կմ սահմանամերձ գոտուց տարահանվող բնակչությանն անհրաժեշտ կոմունալ-կենցաղային սպասարկման ապահովման հաշվարկը ներկայացված է հավելված N 6- ում, իսկ ջրով ապահովման հաշվարկը՝ հավելված N 7-ում:

## Սանիտարական և բժշկական ապահովումը

19. Բժշկական ապահովումն իրականացնում է Առողջապահության նախարարությունը: Տուժածների բժշկական ապահովման համար կներգրավվեն հանրապետության և մարզային բժշկական ուժերը և արտասահմանյան երկրներից՝ որպես հումանիտար օգնություն ստացված բժշկական միջոցները: Արտակարգ իրավիճակներից տուժածների հիմնական զանգվածը բժշկական օգնություն ստանալուց հետո կտարահանվի անվտանգ տարածքներ: Տարահանման միջոցառումների տրանսպորտային ապահովումը սանիտարական տրանս-պորտով իրականացվում է առողջապահության նախարարության կողմից, այլ տրանսպորտային միջոցներով՝ էկոնոմիկայի նախարարության կողմից:

20. Մարզի սահմանամերձ գոտուց տարահանված բնակչության մեջ ծայրահեղ ծանր տուժածների թիվը կկազմի՝ 978 մարդ, իսկ ծանրը՝ 3700 մարդ: Մարզից տարահանված տուժածների անհրաժեշտ բժշկական ապահովման հաշվարկը ներկայացված է հավելված №8-ում:

## Նյութատեխնիկական և սննդամթերքի ապահովում

21. Նյութատեխնիկական և սննդամթերքի ապահովումը ներառում է արտակարգ իրավիճակներից տուժած բնակչության կենսաապահովման համար սննդի և առաջին անհրաժեշտության միջոցների ժամանակին տեղափոխումը և բաշխումը: Սննդի և առաջին անհրաժեշտության միջոցների ֆինանսավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից: Նշված արժեքները պահեստավորում և տեղափոխում է էկոնոմիկայի նախարարությունը, այդ միջոցառումների իրականացման աշխատանքներում ընդգրկվում են ներքին գործերի նախարարությունը, էկոնոմիկայի նախարարությունը, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, առողջապահության նախարարությունը, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, կազմակերպությունները՝ անկախ սեփականության ձևից, ինչպես նաև

